


Տևողությունը – 150րոպե

1. Քանի՞ տատիկ է ունեցել ձեր տատիկի պապիկը:

- 1) 16                      2) 8                      3) 2                      4) այլ պատասխան

2. Քանի՞ ուղղանկյուն է պատկերված նկարում:

- 1) 9                      2) 10                      3) 11                      4) 12



3. 4765 թիվը կազմված է չորս հաջորդական թվանշաններից: Գտնել այդ հատկությամբ օժտված 4765-ից մեծ հաջորդ թվի թվանշանների գումարը:

- 1) 10                      2) 14                      3) 18                      4) 22

4. Խաչիկն ու Վաչիկը միասին ունեն 137 խնձոր, ընդ որում Խաչիկի խնձորների քանակը Վաչիկի խնձորների քանակի կեսից 5-ով ավելի է: Գտնել Խաչիկի և Վաչիկի ունեցած խնձորների քանակների արտադրյալը:

- 1) 685                      2) 2508                      3) 4312                      4) այլ պատասխան

5. Մարինեն, Նարինեն ու Կարինեն հագել էին կարմիր, կապույտ, սպիտակ գույնի շրջազգեստներ և կոշիկներ: Հայտնի է, որ միայն Մարինեի շրջազգեստի և կոշիկի գույներն են համընկնում: Նարինեի հագին կապույտ գույն չկար, իսկ Կարինեն հագել էր սպիտակ կոշիկներ: Ի՞նչ գույնի է Կարինեի շրջազգեստը:

- 1) կարմիր                      2) կապույտ                      3) սպիտակ                      4) հնարավոր չէ որոշել

6. Գումարման գործողության մեջ գույգ թվանշանները փոխարինել են \* -երով:

$$\begin{array}{r} 1 * 7 \\ + 3 * 5 \\ \hline 3 * 1 \\ * 9 3 \end{array}$$

Գտնել \* -երի գումարը:

- 1) 15                      2) 16                      3) 24                      4) այլ պատասխան

7. Դպրոցի 5-րդ դասարաններում սովորում են 270, իսկ 6-րդ դասարաններում 180 աշակերտներ: Հայտնի է, որ 5-րդ դասարանցիների տղաները երկու անգամ շատ են աղջիկներից, իսկ 6-րդ դասարանցիների աղջիկները չորս անգամ շատ են տղաներից: Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ՝

- 1) տղաները աղջիկներից շատ են 32-ով                      2) աղջիկները տղաներից շատ են 18-ով  
3) տղաների և աղջիկների քանակները հավասար են                      4) այլ պատասխան

8. Վազգենն իրար հետևից գրում է բնական թվերը՝ 12345678910111213... և դադարեցնում է գրելը, երբ առաջին անգամ նկատում է իրար հետևից երեք անգամ գրված 4 թվանշանը: Քանի՞ թվանշան գրեց Վազգենը:

- 1) 80                      2) 79                      3) 88                      4) այլ պատասխան

Տևողությունը – 150րոպե

9. Ջամբյուղում եղած 500 գնդակների 80%-ը կարմիր է, իսկ մնացածը՝ կապույտ: Քանի՞ կարմիր գնդակ է պետք հանել զամբյուղից, որպեսզի այնտեղ մնացած գնդակների 75%-ը լինի կարմիր:
- 1) 25                      2) 50                      3) 75                      4) 100
10. Ամիսներից մեկն ունի 4 հաստ հինգշաբթի և 5 հաստ ուրբաթ: Շաբաթվա ի՞նչ օր է այդ ամսվա 10-ը:
- 1) հինգշաբթի              2) շաբաթ              3) կիրակի              4) հնարավոր չէ որոշել
11. Եռանիշ թիվը բազմապատկեցին իր թվանշանների գումարով և արդյունքում ստացվեց 2254: Գտնել այդ թիվը:
12. Պահարանում կան գնդակներ՝ 12-ը կանաչ, 2-ը մոխրագույն, 9-ը դեղին, իսկ մնացած 3-ը կապույտ: Առնվազն քանի՞ գնդակ է պետք հանել պահարանից, որպեսզի հանածների մեջ լինի գոնե 5 հաստ կանաչ գնդակ:
13. Տաքսի ծառայության գնացուցակն այսպիսին է՝ մինչև 4 կիլոմետրն արժե 300 դրամ, այնուհետև յուրաքանչյուր կիլոմետր երթևեկելն արժե 60 դրամ: Առավելագույն քանի՞ կիլոմետր կարող է երթևեկել Լևոնը, եթե նա ունի 3600 դրամ:
14. 1, 2, 3, 4, 5, 6 թվանշաններն օգտագործելով մեկական անգամ կազմում են երկու եռանիշ թվեր: Գտնել այդ թվերի դրական տարբերության ամենամեծ հնարավոր արժեքը:
15. Գրատախտակին գրված են 1, 2 և 3 թվերը: Ամեն քայլի թույլատրվում է այդ թվերից որևէ մեկը փոխարինել իրենից 3-ով կամ 5-ով մեծ թվով: Ամենաքիչը քանի՞ քայլ է պետք անել, որպեսզի գրատախտակին գրված երեք թվերը դառնան իրար հավասար: